

ասհմանը բռնած էին: Ամօտյ արեւմտեան կողմը Սեւասերակի անուն ասհմանակից տեղը՝ նկարա- գրութեմ գեպքին ստեղծեալը՝ Բրգոյ ձեռքն առցաւ: Արքեան Մրուանեանց ձեռքէն Ամօտյ իշխանու- թիւնը Գաբը Էդ-գաւա իբն-Ջէհր առաւ, որ Մէլիք-շահի հնազանդեալն էր:

(Հարսն-իւն:)



ՄԱՅԵՆԱԳՐԱԿԱՆ

ԱՐԳԱՐՈՒ ԶՐԱԾՈՐ ՄԱԿԱՆ ԽՈՐԵՆՈՅԻՆՈՅ ՊԱՏՄԱՐԹԵՆ ՄԷՋ

(Հարսն-իւն-իւն:)

Գ.

Արգարոս գրողին՝ Հայոց Պատմութեան մէջ մտ- ծուիլը:

Բ. գրքին Ժ. գլխէն ետքը՝ որուն արժէքն ու կարեւորութիւնը կը ճանշանք հիմայ, Մ. Խորենացի Հայ Արշակունեաց պատմութիւնը կը շարունակէ եւ կը պատմէ Արտաշէս Անշոյն (Գլ. ԺԱ—ԺԳ) Տիգրան Բ.ի (Գլ. ԺԴ—ԻԱ) եւ Արտաշէս (Գլ. ԻԲ—ԻԳ) թագաւորու- թիւնները: Արտաշէս Անշոյն մեծամեծ գործոցը համար ըստածը՝ շատ անհաւանական պատմա- կան վէպ մը կը կազմէ: Հեղինակին գործածած աղբիւրները՝ — եթէ երբեք ունեցած է, — մինչեւ հիմայ անգիտ տեսցած են: Բայց Տի- գրան Բ.ով՝ որ Տիգրան Մեծն է, Միհրդատայ փեսան, (Մ. Խորենացի իւրայի կ'անուանէ) եւ Արտաշէսով՝ շատ հաստատուն պատմական հողի վրայ են: Տիգրանի թագաւորութիւնը՝ Հայաստանի հին պատմութեան ամենէն աւելի փառաւոր եւ միանգամայն ամենանախը մասը կը կազմէ: Սակայն եւ այնպէս Խորենացի՝ այս- պէս ըսնէր, բան մը չի գիտեր այս թագաւորին վրայ: Նշեպէս լաւ տեղեկութիւն չունի Ար- տաշէսը վրայ, որ յուսական կրթութիւն առած էր, եւ որուն յունարէն գրուածները Պլուտարքոսի ժամանակ գեղ գոյութիւն ունէին: Բոլոր այս շրջանին՝ եւ յաջորդ շրջանին մէջ մա- տին համար Մ. Խորենացի իւր տրամադրութեան տակ ունի միայն թեմեկտո պատմիչը, որմէ կ'օրինակէ թէ շատ ճշգրտութեամբ Պարթեւաց եւ Հայոց վրայ ըստածները: Այս հատուկտոր

տեղեկութիւններն իրարու ձուլելով, եւ շատ անգամ՝ իւր երեւակայութեամբը ընդարձակե- լով եւ ընդլայնելով՝ մեր իօսած երկու թագաւ- որաց կը յաջողի նուիրել գրեթէ ասանակ գլուխներ, որոնց մէջ հարկաւ Հրեաստանը՝ Հայ- աստանի իր անդ մը կը գրուէ:

Չայս ճանչցած էր արդէն Գուտշմիզի՝ Բայց երեւելի քննադատը կը սխալի, երբ կ'ըսէ թէ Մ. Խորենացի մերթ «Հրեական հնութիւն- ներէն» եւ մերթ «Հրեական պատերազմէն» կը քաշէ իւր նիւթը: Հայոց պատմութեան այս գլուխներուն մէջ՝ Յովսէպոսէն փոխ առնուած դէպքերու մանր քննութիւն մը թելը առաւ մեզի հաստատելու թէ «Հրեական պատերազ- մին» միայն առաջին գիրքը գործածուած է իբր երկրորդական աղբիւր: Ի վիճակի ենք ցոյց տա- լու թէ Մ. Խորենացի՝ Յովսէպոսին այս գործը կը ճանշայ, միայն ասորիւն թարգմանութեան մը վրայէն եղած հայ թարգմանութենէ: Մեր մերձաւոր աշխատասիրութեան նիւթը պիտի ըլլայ այս:

Հրեայ պատմագրին քով գտած տարրնե- րով՝ Հայաստանի տարեգիրքներն այսպէս ամ- բողջացնելով, կը հասնի Մ. Խորենացի իրողու- թեան մը՝ որուն համար առատ յիշատակարան- ներ կան:

Նուգնիք Տիգրանայ որդւոյն՝ Արտաշէս թագաւորին գերութեան վրայ խօսիլ, զոր Ան- տոնիոս մասնութեամբ գերի բռնեց եւ Բ. Յ. 34ին նշեղապարտին թաքաւ: Մովսէս այս դէպքը կը պատմէ այսպէս. «(Անտոնիոս) ան- ծեալ ընդ Միջագետս, կոտորէ անհարկի զօրոս Հայոց, եւ ձերբակալ անէ զարքայն նոցա: Եւ զանոց յեղիպտոս պարգեւել նշեղապարտի զԱրտաշէս որդի Տիգրանայ, հանգերձ բազում ընդիւք յանկածն պատերազմին»¹: Անտոնիոս ըրած ճամբուն յիշատակութիւնը, Արտաշէ- զայ զօրաց պարտութիւնը՝ ուրիշ պատմագրաց վկայութեան կերպապէս հակառակ է. կոյմիք մնացեալ մասը բառական թարգմանութիւն է Յովսէպոսէն՝ որ «Հրեական պատերազմին» մէջ, արտաքը կարգի համառօտութեամբ յառաջ կը բերէ այս դէպքերն: Բառ մը խկ չ'ըսեր՝ Ար- տաշէսը՝ եւսպիսեանութեան ձեռքն իյնալու պարագաներուն վրայ, բան մը՝ զոր գրեւ մը

¹ Ueber die Glaubwürdigkeit d. ant. u. kl. (Kleine Schriften, III էջ՝ 308):

² Բ. Ի. Գ.

³ Καὶ μετ' οὐ πολὺ παρῆν ἐν Πάρθων Ἀντιόχου, δῶρον ἀρχιμάχου, Ἀρταβάζην τὸν Τυργάνου παῖδα, δῶρον Κλεοπάτρας. Μετὰ γὰρ τῶν χρημάτων καὶ τῆς ἑλίας ἀπά- σης ὁ Πάρθος εὐδὲς αὐτῇ ἐχαρίσθη. (ՀԲԵ. Գաւ. I, 18, 5)

¹ Th. Reinauch, Mithridate Eupator, roi de Pont, Paris, 1890. Տես այս երկարութեան մէջ «Միհրդատ աս Տիգրանայ» տիտղոսով փոխգրկի գլուխը (էջ 333—376) որ Տիգր. գաղափար կու տայ նոյն ժամանակուան Հայաստանի վիճակին վրայ:

վերջն իսկ Յակիրտոս դեռ « ոճիր Անտոնիոսի »¹ կ'անուանէր: Բնաւ չի իստիր ՍՂԷՔանդրիա բլրած յաղթական մուտքին վրայ, այն յաղթական ձաղանքին վրայ՝ որուն մէջ Անտոնիոս՝ իւր անջնեւն տանելով ոսկեի շղթաներով կապուած Հայոց դժբախտ թագաւորն եւ անոր հետ եղողներն, Կղեոպատրայի տաջեւը կը կեցըներ իւր կառքը, ինչպէս որ հռոմայեցի յաղթողաց ընկերացող բազմութիւնը կանգ կ'առնուր Կպտիստղինոսի Արամազդայ՝ առջեւ: Դոյնպէս չի խօսիր Արտաւազդայ որքա՞յի մահուան վրայ, որ Ագաթանգեղոսի պատերազմէն ետքը Կղեոպատրայի հրամանաւ գլխաւորեցաւ: Յովսէպոս չի գիտեր կամ զանց կ'անուռ այս դէպքերը, եւ ըստ այսմ անծանօթ կը մնա Մ. Խորենացւոյ: Հարկ է թէ ազգային աւանդութիւնը մեռած ըլլայ բոլորովին ի Հայաստան, որպէս զի այս դէպքերու ամենագոյնն արագանցն իսկ չկարենար հասնիլ պատմագրի մը՝ որուն ամենամեծ արժանիքն է հայրենասիրութիւնը:

Փոխանակ միայն « Լեւական պատերազմէն », փոխառութիւններ ընելով՝ եմք Մ. Խորենացի գոնէ « Լեւական հումթեանց », մէջ ալ կարենար տեղեկութիւններ փոխել, պիտի քանդէր անոնց մէջ՝ Հայ քահանայի վրայ Արտաւազդայ յաջորդող երկու թագաւորներուն անունները: « Լեւական պատերազմին », վերադնչ յառաջ բերած մահին համապատասխանող Կտորեան մէջ՝ արդեամբ իսկ կը կարողանք թէ Արտաքսիա (Արտաշէս) Արտաւազդայ անդրանիկ որդին, խոյս առլով իշխանութիւնը ձեռք առաւ, եւ թէ ետքը Հռոմ մայեցիք զինքը մերժեցին եւ անոր կրտսեր եղբայրը՝ զՏիգրան գահը նստօղջն՝²։ Դիմել Պաւստոս եւ Յակիրտոս կատարելապէս կը հաստատեն Յովսէպոսին բաժնեկէն: Տիրերիտոս որ Ագաթանոսէն զրկուեցաւ, հարկ չունեցաւ քահանայեց ընել Վերաշէս՝ զոր սպաննուած քառա իւր իսկ հպատակներուն ձեռքը, եւ ք. Յ. 20ին թագաւոր որ դրաւ Հայոց վրայ զՏիգրան որ Լոսմ անաճ էր՝³։

¹ Ob scelus Antiochii, qui Artavasdem, regem Armeniorum, specie amicitiae illeceum, dein catenis oneratum, postremo interfecerat. Յակիրտոս, Յորեպոլիս II, 3.
² Dion Cassius, XLIX, 39, 40. Համաձայն Prieux, Connection, IV 276 եւ յաջորդ (այսպէս. 1826):
³ Dion Cassius, II, 3.

⁴ Ἀρμενίας δὲ βασιλεύσαν Ἀρταξίας ὁ πρῶτος τῶν ἐκείνου (Արտաւազդ) παίδων, διαδράς ἐν τοῖς αἵματι. Καὶ τοῦτον Ἀρχέλαος καὶ Νίγων Καίσαρ ἐκβαλόντες Τυράντων τὸν νεώτερον ἀδελφὸν ἐπὶ τὴν βασιλείαν νατίγαγον. Ταῦτα μὲν οὖν ἐν ὑστερίῳ (« Լեւական Հումթ. Ժ. 2. 3. ») Ἀρχέλαος եւ Νίγων անուանեցող երկու անուններով թիւիք: Արեւելոսը Կպպիպոզովիս թագաւորը, եւ Տիրերիտոսն է: Tigranes deductus in regnum a Tiberio Nerone (Տաիրտոս, Յորեպոլիս, Բ. 3.)

⁵ Դիմել Պաւստոս, Խ. Բ. 39, 40. Յակիրտոս, Յորեպոլիս, Բ. 3:

Եւ որովհետեւ Հրեմիան զարեւելը կը լռէ Արտաւազդայ յաջորդներու մասին, Մ. Խորենացի չի ճանաչար մեր յառաջ բերած թագաւորներն, որոնցով կարելի է ըստ չափաւորողներն՝ պատմութիւնը: Արդ, եմք իւր առջեւն ունեցած աղբիւրները կրցանք ճշգրտեմ հաստել, իրեն մինչեւ հիմայ առաջնորդող ուղղել թելը կը կորնցընէ Մ. Խորենացի: Եւ իրօք Յովսէպոս այլ եւս Հայոց թագաւորներն չի յիշեր, բայց եմք միայն իւր գրքին վերջերը՝, ուր կը խօսի Տրդատ անուամբ թագաւորի մը վրայ, որ Աւանաց պատերազմին մէջ (Քրիստ. ետքը 72ին) թշնամաց պարանով մը բռնուած կը համարուի. եւ ուրիշ կողմէն գիտենք որ տոյն այս Տրդատ՝ 61ին՝, Պարթեւաց թագաւորին՝ Վաղարշակայ Ա. Նոյն ձեռքը Հայոց թագաւոր պատկուած է: Մեղհակաւան՝ գրի առնուած նուիրական պատմութիւններ՝ կը յիշաւանկէին Անաւարուկ թագաւոր մը, որ հաւանքն էր եղած Թագէտոս առաքելոյն՝ որ Քրիստոսի մահուանէն թիւ մը ետքը ի Հայաստան աւետարանը քարոզելու եկած էր: Արտաւազդայ գերութենէն (Ք. Յ. 34ին) մինչեւ Սանատրուկ թագաւոր՝ Մ. Խորենացւոյ պատմութեան մէջ 60 տարւան անընդհատ մը կը մնար, զոր պէտք էր լեցընել: Ինչպէս յաջորդեալ Խորենացի:

Երկրորդ գրող Ժ. զլուին ուսումնասիրած ասանց ցոյց տալիք որ Մ. Խորենացի իւր երկուն ունէր հայերէն թարգմանող թագաւոր մը, եւ կասիրութիւն, որոնցմէ մին՝ Եւսեբիոսի Եփեսոսի զարեւելը կը լռէ, իսկ երկրորդը՝ Ղերուսինայի (Լաւաւնայի) գիրքը: Երկուքն ալ կը պատմեն Եփեսոս թագաւորին՝ Արգաւոր, զարմանայի Եփեսոսի իսկները, որ Յիստոսի Քրիստոսի հետ թղթակցած էր, եւ Թագէտոս առաքելոյն ձեռքը՝ որ այս նպատակաւ զրկուած էր, անբուժեմ իւր ժողովրդով զարձած էր: Այս պատմութիւնը իսկ Եւսեբիոսի յարգելի անուամբն երաշխարեալ էր, բացարձակ պատմական նկատուած էր: Արգաւոր թագաւորը՝ արշալուին հայ թագաւորաց շարքին մէջ մտցընելով եւ զինքն իւր Սանատրուկ նախորդը նկարելով, մեր նշա-

¹ Լեւական Պատերազմ. Ե. 9, 1:

² Մ. Խորենացի իւր Պատմութեան մէջ չի յիշեր այս Տրդատը, որ Երեմիան իշխանութիւն առնելու համար 66ին Լոսմ գոյաց (Հմմտ. Պաւստոս, Խ. Բ. 181 եւ յաջորդ.) բայց (քեմիստիկ) պարանին մարտնչող զանց անհիշ չէ ուզած, եւ անանց ժամանակագրութեան միտ զնկելու նոյն գրքերը կը պատմէ Տրդատ Գ. Պրիգորի ժամանակակցին վրայ (Բ. 25), այսինքն Գ. զարուս վերջերը:

³ Պատմ. Հայոց, Բ. 38. Քիչ մը վաղը պիտի դառնայ այս յիշատակարաններուն:

նախան անընդհատ լինելուան էր, եւ կամ քիչ բան կը պակսէր, եւ Հայոց պատմութիւնը կը ճախանար զլիւծով մը՝ որ զՀայերը իբր քրիստոնէական թեան արձնող առկրն ազգը նկատել պիտի տար: Ստոյգ է՝ ոչ Եւսեբիոս եւ ոչ՝ Աբգարու թուղթը, նոյն իսկ իւր փոփոխութիւններուն մէջ, չէին պարունակեր բառ մը իսկ, որ թոյլ տար Եգեթոյ թագաւորութիւնն իբր Հայկական նկատելու: Բայց Մ. Խորենացի Տիւնաս էր Հայոց պատմութեան մէջ՝ Յովսէփոսի Պարթեւաց մասին պատմածը, եւ թերեւս արգէն կը մտածէր այն բանը՝ զոր քանի մը գար ետքը Բար-Հըրէրէցի սասորին այս խօսքերով կը քացատարէր. «Պարթեւ կամ Պարսիկ, Պարսեւ կամ Եգեթացի, Պարթեւ կամ Հայ նոյն բանն է»¹:

Հաս գտարին եւ ստուգութեամբ ըսելով թէ Մ. Խորենացի անձամբ մտածած է Աբգարու զոյցը՝ «Հայոց Պատմութեան», մէջ, թէ՛ իւր ժամանակներն ենթադրուած աւանդութիւնն որ գրի առած է պարզապէս: Սակայն առաջին մեկնութիւնն ընդունելու աւելի մէտ ենք: Մ. Խորենացւոյ յառաջ բերած գրաւոր յիշատակարաններու կարգին մէջ՝ աւր իրապէս Սանատրուկ անունը կար, պէտք է ինչպէս կ'երեւայ, դասել «Սիբոն Թագի Եւ Սադեթոյ Խոօն Կոյր-Բան»², որուն վրայ Տրակիոսն է արգէն ձ. 8-շնան՝ քննադատներու մտադրութիւնը³: Այս հետաքրքրական յիշատակարանը՝ «Աբգարու թղթին», կրած փոփոխութիւններէն ետքը գրուած է, բայց «Հայոց Պատմութեան», աւելի Հնագոյն պիտի ըլլայ⁴: Արդ ինչ կը կարգանք հետեւեալը. «Եւ ինքն իսկ թագաւորն Աբգար որ բժշկեցաւ ի սրբոյ առաքելոյն, եղեւ քարոյլ բանին կենաց, եւ նշանագործ յամենայն բարիս. եւ որհնէր սուրբ առաքելան զմագաւորն եւ զամենայն հաւատացեալն, եւ... առնոյր զաշակերտան եւ փութով Հասանէր յաշխարհ Հայոց, առ թագաւորն Սանատրուկ»⁵, Այս կտորէն յայտնի կ'ըլլայ թէ Սանատրուկ ա Աբգար իբր մի եւ նոյն տեղւոյ թագաւոր նկատուած չեն:

Եւ ոչ երկու թագաւորաց մէջ եղած ազգականութեան կապերն յիշատակուած են⁶:

Անտարակոյս Խորենացւոյ ժամանակակից աւանգուածութեան մը բացատրութիւնն է այս: Ստոյգ է որ մի եւ նոյն հասարակ մէջ ապագրուած՝ Նոյն վայրագութեան բնագրի համեմատութիւն մը, իրենն աւրիշ երեւութիւն տակ կը ներկայացնէ. «Են թագէտս յուրհա քաղաք առ թագաւորն Հայոց եւ Ասորոց Աբգար»⁷, եւ քիչ մը վարը. «Թագէտս թղթովն Աբգարու (եւ) հրամանաւ փրկին... գայ յաշխարհս վերին Հայոց», առ Սանատրուկ արքայն՝ որ էր քեհոքիի հաւատացեալ արքային Աբգարու, իւրաց պէս պայծառ կ'երեւայ մեզ թէ այս երկու բնագրիներն Մ. Խորենացւոյ զոյցով իրարմ անընտասած են: Եւ երկրորդ խմբագրութեան՝ մի միայն նշատարն է միաբանել իրարու՝ Թագէտի ի Հայաստան առաքելութեան հին զոյցը՝ «Հայոց Պատմութեան», մէջ մտածած նոր տեղեկութեանց հետ:

Երբ ենթադրութիւնը նոյնպէս հաստատութիւն կ'առնու Եւսեբիոսի տեղեկութեանց եւ՝ Աբգարու թղթին, վրայ եղած յաւելումներէն, զորոնք կը ներկայացնեն մեզ «Հայոց Պատմութիւնը», Ոչ թէ միայն շատ մը գլուխներ աւելցուած են Աբգարու պատմութեան վրայ՝ որուն թագաւորութեան՝ միայն ՅՅԴԴ տարիներ սկսեալ կը զբաղի զոյցը, այսինքն առ Յիսուս գրած նամակէն սկսեալ, այլ Աբգարու նախորդ մին ալ կը տրուի, որ զոյգութիւն կ'առնու: Մ. Խորենացւոյ արամեագրութեան տակ եղած յիշատակարանաց տրուած սխալ մեկնութիւնն, ընդհանուր ձգամամբ, առաքելները կը գործածելու եղանակով՝ այս յաւելումները կը մասնեն գրոյթին ձեւը, եւ չեն ներեր կարծել տալ թէ ընդհանուր տիրող աւանգուածն է մի փոք առնուած ըլլան:

Քիչ մը ետքը յառաջ պիտի բերենք Մ. Խորենացւոյ պատմածը, ըստ կարեւորէն լուսատուր կերպով մերձեցնելով այն աղբիւրներուն՝ որոնցմէ ինքն առած է: Բայց նախ եւ յառաջ երկու կարճ գիտողութիւններունը ընելու:

¹ R. Duval, Պատմութիւն Եգեթոյ, էջ 29.

² Վենետիկ, 1853, Սիբեթ Ը:

³ Սիբ. էջ 20, մանրէ. 2.

⁴ Թագի (Կոյր-Բան-Սիբեթ) թագաւորութիւն չի թուիր, ինչպէս կ'ըսէ Վենետիկը եւ հրատարակողները, կը կարեն: Սակայն (էջ 15 եւ յաւ.) Մարկոսի Աւետարանէն թ. 2, 13, 16 վկայութիւն մը յառաջ կը բերէ, որ առաքելան թագաւորութեան մէջ կայ, բայց Մարկոսի Աւետարանէն վերջին (9-20) անտրոյգ մէկտեղ՝ Հայերէն հին Ս. Վրդեման մէջ կը պակսուի, ինչպէս կ'երեւայ. առաջին պատմական հրատարակութիւնը:

⁵ էջ 12 եւ յաւորք. Համեմատ այս կտորը՝ վերագոյն՝ ձ. Ամ. էջ 174. նշանական փոփոխութեանց հետ:

⁶ Ըստ Մ. Խորենացւոյ Սանատրուկի Աբգարու քեհոքիի էր:

⁷ ... առ թագաւորն Հայոց եւ Ասորոց Աբգար, էջ 39. Հոս «Հայոց եւ Ասորոց ընդօրինակութիւնն (յաւելումն)» անշուշտ է:

⁸ էջ 60. Վերին Հայ (Arménie supérieure) անտար բացատրութիւն՝ (պետք չէ չմոռնալ Բուրջ Հայի հետ (Haute Arménie) անտրոյգ կը ձգուի Աբգարու. Հայ թագաւորութեան եւ Սանատրուկ յայտնա Հայ թագաւորութեան մէջ տարբերութիւն գտելու. (?)):

⁹ Արդեւ քարոզութեան տարբերութեան բնագրին մէջ կը պակսուի թագաւորն, բայց պէտք է «Աբգարու թղթէն» առեալ անընդունել: Մոլեմա ալ չի սխալ:

Արդէն ըսինք թէ Աբգարու զըջըը ստյգ պատմութենէ կը խոտորեցնէ զմեզ, ուրիշն աւելորդ է՝ Յիսուսի ժամանակակից Աբգար Ե. Ուկամայի (Արշամայ = Սեան) վրայ դիտած մեր քիչ բանը հոս պատմելը Այս նկատմամբ տեղեկութիւն խնդրող հետաքրքիր ընթերցողն կ'առաքենք Գուռշմիդի եւ Գիւլվաի՝ մասնական երկատիրութեանց:

Գարեթալ բոլորովին մեկուսի պիտի թռնուէր Ե. Խորենացոյ (Թագաւորութեանց նկատմամբ տուած ժամանակագրութիւնն ու թուականները: Բոլորովին մասնական խնդիր է այն, եւ հաւաքական աշխատութիւն կը պահանջէ, որով չենք կրնար այս տեղը օգտակարապէս զբաղիլ: Պարզ օրինակ մը բաւական է նիւթին բնութիւնն ու դժուարութիւններն ըմբռնել տալու: Արտաւազդայ գերութիւնը ք. Յ. 34ին եղած կը համարուի: Իւր յարգըն՝ Արշամ 20 տարի կը Թագաւորէ (Գլ. ԻԵ). ենթադրենք թէ 33ին քահն էլած ըլլայ, եւ հասնիք ք. Ե. 14ին: Արդ եթէ 13 թուականէն սկսեալ Աբգարու թագաւորութեան (Գլ. ԼԳ) 38 տարիներն համարենք, կը հասնիք իւր մահուան տարւոյն ք. Ե. 25ին, եւ այս բոլորովին կը հակառակի զըջընն տուած տեղեկութեանցը: Բայց, կը կրկնենք, խնդիր մըն է այս, որուն մէջ չենք ուզեր մտնել այսօր:

(Ըստնախնդրի)



ՅԱՐՈՅԱ ՀՆՈՅԻՆ ԶԵՌՈՒԹՐՈՅ ՄԱՆՍՈՐՈՅԻՆ ՎՈՐԺՈՐԱՆԻՆ Ի ԿՈՐԻՆ

(Ըստնախնդրի)

3.

ՍՆԼՄՈՍ

Ուրիշ = 1596.

ՅՈՒՂԹ 186. էջ 366: — ՄԵՌՈՒԹԻՆՆ՝ 85 սմ. երկ. 65 սմ. էջն. 25 սմ. Տես: — ՅՈՂ՝ 19: — ՆԻԹԵՐԱՄԱՆԱԿԱ թուղթ: — ՎԱՅՐՄ փայտեայ ամրոցը կաշեպատ քերթուած: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ քաւական մարգար. անուցը տառախալի. ԼՈՒՍԱՆՑԱՅՐՄԻՔ 66. ԳԼԱՆԱՅՐՄԻՔ 8, ոչ այնքան լաւ: — ԳՆԱՍԻՄ թուղթ՝ 4 էջ առնչելն եւ 3 էջ ետեւէն: — ԳԻՐ՝ սեւ թանաքով, քողորդի մանր: — ՄԱՅՐԱՍՏԱՌՈՒՆԻՆ ու ՄԱՅՐԱՍՏԱՌՈՒՆԻՆ կարմիր: — ԳՐԻԶ՝ թուխթից Գնորոս արեղայ: — ԳՐՈՒԹԵՆԱՆ ՅՈՂ՝

⁴ A. v. Gutschmid. Untersuchungen über die Geschichte des Königreiches Osroene. Գեղեթուրք, 1889 (Mémoires de l'Académie impériale des sciences de Saint-Petersbourg, VII. série, t. XXXV. № 1.) — Կոպպե R. Duval, Histoire politique, religieuse et littéraire d'Edesse jusqu'à la première croisade. Պարիս, 1892 (Հանաւէր լ'Journal asiatique, 1891).

Երզնկայ: Նախարան եւն ըռնի. էջերը նշանակուած վերի կողմի, մինչեւ 42. յետոյ 44 եւն. անսնց նշանակուելու 43. 235էն սկսեալ թուղթը, կը նշանակուի վարդ. լուսանցազրուիւնն եւն չկայ: — ՅՈՂՆԻԹԻՆՆ՝ սկիւղը չորս պարսաւ էջերէն մէկուն վրայ գրուած է. «Մասնը յուրը փարայ ըռալալին տըռի յուրը փարայ ըռալալին տըռի», սեւ մշանով. Նոյնը մաստոյով ուրիշ նքոն մը: — ՅԻՆԱՍՏԱՌՈՒՆՆ՝ կայ ըռնն գրչէն եւ օտարներէ:

Մասեանս եւ Սաւառան, ըստ սովորութեան: Սաւառաններէ վերջը կու գան քաի մը աւ զՅԵՆԵՐ՝ Շատուածներ, Սիմոնի ծերունայ, Մանասէի:

ԵՆԱՍՏԱՌՈՒՆԻՆ՝ էջ 357. ԳԻՆՈՒՆՆԻՆ՝ յետագայ, բուն գրչէն «Փառք համազայ անքաւանիկ սք. երբորդութեան. հաւաք եւ որդայ եւ հողայ սքայ պիտի եւ միշտ եւ յաւիտեան յաւիտեանք ամեն: Աւարտեցաւ տաղմարանս ի թվին. Ուրիշ. (= 1596) օգոստոս ամսոյ ԺԸ. աւրն շրջաբարձիկն, ի գուռն սք. կրկնաթու. կրկնեցայ զաւառն երզնկան. ձեռամբ թոխաթից. անարքան եւ անպիտան. հողոյ հաւաքայ պիտոս արեղայ, անմեղայի լեռուք երաղը. խնս ընդլեցայ, որ գին մանոր է. զի կար մեր պիտի: Փառք յաւիտեան ամեն»

Մնացեալ էջեր տարբերքով եւն եւ տարբեր նիւթով. անտրակ մըն է առնալին՝ որ կը պարսաւանէ՝ հաւատով խոտորմանով, սկսեալ «Ժամն մերոյ փրկութեան խաչեցար եւ թաղեցար եւ յարեար ի մեռելոց... իշխան զիս յարեամ զաս եւն» տողերէն:

Հաւատովէն վերջը: «Ողջն քեզ մարիամ լի շնորհք ար. ընդ քեզ աշխ. եւ գուռ ի կոնայս եւ աշխ. եւ պտուղ յորովայնի լաւ յս. լաւ սք. մարիամ մայր այ. բարեխառն զս. մեր թաղաւորաց պիտի եւ ի ժամ մահու մերում ամեն: Բա. Նա. զովեցի թաղաւոր հրեից գուռ պահեալ զմեզ խաղաւթի: ի գրչերիս այսմիկ եւ ամ. ժամու փրկել զմեզ ի փորձութենէ եւ ամ. ժամու փրկել մերոց ամեն: Յետոյ տարբեր գրով: «Երկուց Երեսուցիկն, եւ աւելի վերջը. — Ի թվ. ՌՄԼԻ. (= 1788) ի օգոստոսի իշխակ սք. տաղմարոց արեղ. անմեղիկն եւ իւր կողմն: եւ համան նշնեցեղոյն որ եւ ար. մերաւոր բարեպալեա վայելեցէ ամեն»

4.

ՀԱՐԱԿԱՆ

Ուճաւ = 1666.

ՅՈՒՂԹ 366. էջ չէ նշանակուած: — ՄԵՌՈՒԹԻՆՆ՝ 125 սմ. երկ. 9 սմ. էջն. 5 սմ. Տես: — ՅՈՂ՝ 23: — ՎԱՅՐՄ փայտեայ դուրսէն կաշիով եւ ներսէն մետաքով պատուած: — ՆԻԹԵՐԱՄԱՆԱԿԱ եւ փայլուն մագաղաթ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ շատ մարդը, անսնց տառախալի: — ԳՆԱՍԻՄ թուղթ՝ ընդ ամենը 3 էջ: — ԳԻՐ՝ սեւ թանաքով, քողորդի: — ԼՈՒՍԱՆՑԱՅՐՄԻՔ 150, ԳԼԱՆԱՅՐՄԻՔ 10. 3 մեծ ՊԱՅՐՄԻՔ ամբողջ էջն վրայ մըն ՅՈՂԱԿԻՐ եւ նման. միւսը Յարութիւն Քրիստոսի. եւ երրորդը Հոգեպալատ: — ՄԱՅՐԱՍՏԱՌՈՒՆԻՆ՝ զարդարուն, գեղեկաւար. ՄԱՅՐԱՍՏԱՌՈՒՆԻՆ՝ կարմիր թանաքով. պատկերները շատ գեղեցիկ, փայլուն եւ պայծառզոյնքով, ճաշակաւոր: — ԳՐԻԶ՝ չէ նշանակուած: — ՅՈՂ՝ Երզնկայ Եռոցի գիւղ: — ՏԻՐ՝ Շուշան: